

ՀՏԴ 330.8

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ Վ ԴԱՐԻ ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՄԱԼՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ¹, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ²

¹Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

²«Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամ

Հայ կառավարչական մտքի ուսումնասիրությունն առավել քան արդիական է, քանի որ միայն անցյալի և ներկայի համեմատությամբ միջոցով է հնարավոր ավելի բազմակողմանի իմաստավորել հանրային կառավարման համակարգն ու նրա հաստատությունների նշանակությունն ու էությունը:

Բանալի բառեր. կառավարչական միտք, հանրային կառավարում, կառավարման սկզբունքներ, պետություն, ղեկավար-ենթակա փոխհարաբերություններ:

Հայ կառավարչական մտքի ուսումնասիրությունը կարևոր տեսական և գործնական նշանակություն ունի կառավարման ազգային համակարգի ձևավորման համար, որն իր մեջ ներառում է սեփական ազգամշակութային յուրահատկությունները և ձեռքբերումները: Ամեն մի դարաշրջան իր ըմբռնումներն ունի հանրային կառավարման վերաբերյալ: Դրանց վերլուծությունը կարող է հիմք լինել հանրային կառավարման ազգային առանձնահատկությունները բացահայտելու, ինչպես նաև սեփական փորձը և ազգային առանձնահատկությունները գործադրելու հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Հայերեն բացատրական բառարաններում «հանրային» և «պետական» բառերին տրված են հետևյալ բացատրությունները, «հանրային»՝ ամբողջ հասարակությանը վերաբերող, հասարակական, բոլորին՝ ընդհանուրին պատկանող, համայնական, «պետական»՝ պետության հատուկ՝ վերաբերող [5]: Մինչդեռ «Public» բառը թարգմանաբար նշանակում է և՛ պետական, և՛ հանրային: «Public» բառի տարբեր իմաստներից ելնելով նույնացվում են պետական և հանրային կառավարում կատեգորիաները [14, էջ 560]:

Կառավարման տեսության հիմնախնդիրները, մասնավորապես պետության, պետության ղեկավարի դերը, իշխանության բնույթը, ղեկավար-ենթակա փոխհարաբերությունները քննարկվել են **Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու** աշխատություններում:

Մովսես Խորենացին (410–495 թթ.), հայոց պատմագրության «հայրն» է: Նրա «Հայոց պատմությունը», ի թիվս այլ նյութերի, պարունակում է նաև տեղեկություններ, որոնք կարող են որոշակի պատկերացում

տալ Խորենացու կառավարչական հայացքների մասին: «Հայոց պատմությունը» ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև Մեսրոպ Մաշտոցի մահը՝ 440 թ.: Սահակ Բագրատունու խնդրանքով գրում է «Հայոց պատմությունը»: Խորենացին առաջինն է շարադրել հայոց ազգի ամբողջական պատմությունը, «Հայոց մեծերի ծննդաբանությունը» գլխում կազմել է հայ նահապետների և թագավորների ճյուղագրությունը:

Խորենացու «Հայոց պատմություն»-ը հայ ժողովրդի նախաքրիստոնեական դարավոր կյանքի գիտական հայտնությունն է և, միաժամանակ, քրիստոնյա հայության ազգային կյանքի, նոր վերածննդի ծրագիրը, ուղենիշը՝ մաշտոցյան գրերի գյուտից ի վեր, ներառյալ մեր ժամանակները [12]:

Խորենացին օգտվել է նշանակալից, սակայն սահմանափակ քանակով պատմական սկզբնաղբյուրներից: Նա գերադասել է հիմնականում ոչ թե պարսկական և քաղդեական աղբյուրներից, այլ իրեն հարազատ հունական պատմագիրներից: Նա Հունաստանը համարում է «գիտության մայր կամ դայակ», որովհետև հունաց թագավորները հոգ են տարել հունարեն թարգմանելու ուրիշ թագավորների դիվանների գրքերը [4]:

Մովսես Խորենացին արտահայտել է գաղափարներ պետության ինքիշխանության, ազգային պետականության մասին: «Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի» [10, էջ 13]:

Հատուկ նշանակություն ունի Արշակունիների թագավորական տան ներկայացուցիչ Վաղարշակի՝ Հայաստանում գահակալման և պետության կազմավորման ուղղությամբ կատարած գործունեությունը: Այստեղ Խորենացին տեղեկություններ է հայտնում հին հայկական պետական ապարատի, արքունիքի, զորքի, արդարադատության մասին: Վաղարշակը, ըստ Խորենացու, հայկական թագավորական տան հիմնադիրն է և նրա գահակալության ժամանակը համընկնում է պատմական Արտաշեսի տարիներին: Վաղարշակին Խորենացին համարում է արդարացի, խելացի կառավարիչ: Վաղարշակ թագավորը, լինելով վճռական անձ, նախ՝ կարգավորում է ինքն իրեն և իր տունը: Կարգավորվում է նաև արքունիքի աշխատանքը, սահմանելով ելք ու մուտքի, զբոսանքի, խորհրդի ժամերը: Թագավորը իրեն կից պահում է խորհրդատուներ, որոնք օգնում են թագավորին որոշումներ ընդունելիս: Նա փորձում է իմանալ, թե ովքեր են կառավարել իրենից առաջ և ինչ գործեր են կատարել: Թագավորը, ճշտելով անցյալը, ցանկանում է պարզել իր գործողությունները: Վաղարշակի այս քայլը ցույց է տալիս, որ նա եղել է շրջահայաց կառավարիչ: Ընդունելով թագավորությունը՝ նա, նախ և առաջ, փորձել է ծանոթանալ անցյալին, որպեսզի իրականացնի ճիշտ և արդյունավետ կառավարում: Նա դիմում

է ասորի Մար Աբաս Կատինային, գնա եղբոր՝ Արշակ Մեծի մոտ և ուսում-նասիրի արքունական դիվանը: Մար Աբաս Կատինայի հայտնաբերած մատյանը պարունակում է տվյալներ հայոց պատմության վերաբերյալ:

Վաղարշակը կազմավորում է նախարարությունները. «սահմանեց նախարարություններ և այս նախարարությունների համար նահապետներ պիտանի մարդկանցից, որոնք ծագում էին մեր նախնի Հայկի սերունդից և ուրիշներից» [10, էջ 133]: Վաղարշակը բարձր է դասում արդարությունն ու իրավունքը և «իրավարարներ» է նշանակում ինչպես արքունիքում, այնպես էլ ավաններում: Գործակալությունները կցում է որոշակի նախարարական տոհմերի. Բագրատունիները դառնում են թագադիր, Խոռոխունիները՝ թիկնապահ, Մամիկոնյանները՝ սպարապետ ու զինակիր և այլն: «Նախարար» բառը սկզբնական եղել «նահարար», որը նշանակում է «երկրի, շրջանի տեր, գլխավոր» [6, էջ 151]: Այս եզրն իր մեջ իմաստավորում է հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր դեր կատարած մի ինստիտուտ, ամբողջ մի ժամանակաշրջան, որ կոչվել է նախարարական:

Հ. Մանանդյանը Հայաստանի նախարարական ժամանակաշրջանը համարում է ավատատիրության շրջանը «Ազնվականների այս բարձր դասն անվանվում է հնագույն հայ աղբյուրներում՝ «նախարարք», «նախարարազունք», «ազգք» կամ «տունք նախարարյաց», իսկ նրանց պետական կարգի իշխանությունը, նաև այդ իշխանության տակ գտնվող երկրներն՝ անվանվում են նախարարություն» [7, էջ 32]:

Խորենացին թագավորական կենտրոնաձիգ իշխանության կողմնակից էր: Պետության խորհրդանիշը թագավորն է: Հայ թագավորներից Խորենացին առանձնացնում է Տիգրան Մեծին. «Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ» [10, էջ 85]: Թագավորը պետք է լինի պարկեշտ, մեծասիրտ, պերճախոս, իմաստուն, որովհետև դրանք կառավարչի կարևոր հատկանիշներից են:

Վաղարշակը պարզում է նաև նախարարությունների ծագումը: Խորենացին նախարար է համարում նաև Հայկ նահապետին՝ «անվանի և քաջ նախարար, հաստ աղեղով և հզոր նետաձիգ» [10, էջ 39]: Հիշատակվում է «իմաստուն Շամբատ Բագարատը», որը պետք է «որդուց որդի» լիներ թագադիր Արշակունիներին: Նրանց ցեղը կոչվեց «Բագրատունիներ», որոնք, ըստ Խորենացու, հրեա էին: Բացի թագադիր լինելուց՝ Բագարատը նշանակվել է «կողմնակալ, բյուրերի և հազարների իշխան» [10, էջ 117]: Բագրատունիները սկզբնական շրջանում ունեցել են մի քանի պաշտոն: Սա վկայում է նաև, որ հավատարիմ ծառայության համար թագավորը անսահմանորեն վստահել և վարձատրել է նրանց: Նախարարները քաղաքական լայն իրավունքներով օժտված մարդիկ էին: Նրանք թագավորին

հպատակ իշխաններ են եղել, որոնք առանձին իրենց ժառանգական գավառներն են կառավարել, ունեին սեփական զորք և թագավորի կոչով համախմբվում էին ընդհանուր թշնամու դեմ: Իսկ Բ. Խալաթեանցի կարծիքով՝ «Ի սկզբանե նախարարությունը ժառանգական էր, այն շնորհում էին արքային հավատարիմ ծառայելու համար» [2, էջ 6]:

Խորենացու «Հայոց պատմությունը» նախարարության պատմությունը շարադրելու առաջին փորձն է եղել: Որպես նախարարության պատմիչ նա փորձել է նախարարության ծագումը պարզաբանել պատմական անցյալի ներքո: Նախարարները ունեին ժառանգական տիրույթներ, և ստանում էին նաև «պարգևներ»: Այսպես, պարսից Արտաշիր արքայի միջնորդությամբ Համագասպ Մամիկոնյանին է տալիս «Հայոց նախարարների մեջ հինգերորդ գահը», ինչպես նաև գյուղեր և դաստակերտեր [10, էջեր 339 – 401]: Նախարարությունները Հին Հայաստանում կատարել են քաղաքական կարևոր դեր, եղել հայկական պետականության հիմքը: Վաղ ֆեոդալիզմի շրջանում Հայաստանում խոշոր կալվածքներ ունեին նախարարները, որոնց թիվը ըստ Ն. Ադոնցի եղել է 50 [1, էջ 451]: Դա էին վկայում Գահնամակի փաստաթղթերը, որոնք նախարարական տոհմերի հաշվառումն ըստ իրենց տնտեսական հզորության և դրանից բխող դիրքի ազնվապետական աստիճանակարգում:

Պատմիչը նկարագրել է տեղական կառավարման մարմինները: Թագավորը կարգավորում է քաղաքների, գյուղերի կառավարումը, «տերեր» նշանակում գավառներում և գյուղերում՝ «գյուղերի և գավառների անուններով նրանց կոչելով» [10, էջ 131]: Քաղաքաշինությունը թագավորական բոլոր գործերի մեջ համարվել է շատ կարևոր և յուրաքանչյուր քաղաք ունեցել է «քաղաքապահ զորք» և «քաղաքի վերակացու», որն իրականացրել է քաղաքի կառավարումը:

Նախարարների միջև վասալական պարտականությունների սահմանագատումը կարևոր է պետության մեջ կայունություն հաստատելու առումով: Պետական կառավարման կայունությանն է ուղղված արքայի այն որոշումը, որ գահաժառանգը պետք է բնակվի հոր հետ, իսկ մյուս գավառները՝ ծայրագավառում: Ահա այն երեք գավառները, որտեղ պետք է ապրեին Արշակունի սեպուհները՝ Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի:

Խորենացին ուշագրավ տեղեկություն է հաղորդում կառավարչական ճիշտ որոշում ընդունելու հարցում: Թագավորը իր կողքին երկու մարդ է պահում, որոնցից մեկը պետք է «բարին» հիշեցնի, մյուսը՝ «վրեժխնդրությունը»: Թագավորը բարկության պահին, եթե ցանկանում է որոշում կայացնել կամ «անիրավ հրաման» տալ, ապա անմիջապես նրան հիշեցնում են «իրավացին և մարդասիրությունը» [10, էջ 133]: Այսինքն՝ բարկության

պահին թագավորը խուսափել է որոշում կայացնել, մի լուծում, որ արդիական է բոլոր ժամանակների համար:

Խոսելով Աշտիշատի ժողովի մասին՝ Խորենացին նշում է, որ Ներսես կաթողիկոսը «եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմաններով հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արավ անգթությունը, որը մեր երկրում ի բնե սովորական էր» [10, էջ 377]: Եկեղեցական ժողովների ընթացքում ևս քննարկվել են աշխարհիկ հարցեր: Ներսես կաթողիկոսը նախարարների և թագավորի միջև հաշտություն հաստատելու համար գումարում է եկեղեցական ժողով, որի ընթացքում որոշվում է, որ «թագավորն այսուհետև ուղղությամբ վարվի և իրենք հավատարմությամբ նրան ծառայեն» [10, էջ 355]:

Խորենացու «Հայոց պատմությունը» եզրափակող «Ողբ»-ը կարելի է դիտարկել որպես «հանրային կառավարման համակարգային ճգնաժամի արձանագրում» [16, էջ 29]: «Հայոց պատմության» ողբը հայ ժողովրդի միաբանության, ինքնաճանաչման գաղափարի, ինքնուրույն, անկախ պետականություն ունենալու գաղափարի հիմն է, որ հնչել է բոլոր դարերում և հնչում է մինչև այսօր [12]:

IV դարի վերջին քառորդից հայոց քաղաքական կյանքն արդեն գնում էր դեպի անկում, չկար հզոր քաղաքական ուժ՝ դիմագրավելու արտաքին, կործանարար ուժերին, սկսած անկման առաջն առնելու: Այստեղ տրված է կառավարման կարևորագույն հիմնադրույթը, այն է՝ ամեն մեկը, լինի ղեկավար թե ենթակա, պետք է իր տեղում լինի, իր տեղին ու գործին համապատասխանի: Հայոց պետության մեջ խախտված է այդ պահանջը, խախտված է կառավարման բոլոր մակարդակներում: Դա ամենից առաջ վերաբերում է պետական կառավարման ղեկի մոտ գտնվողներին. «իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ազահ, հափշտակող, աշխարհ ավերող, աղտեղասեր», «կառավարիչները կարգ չեն պահպանում» [10, էջ 453]:

Բարոյագրված է դատական համակարգը. «դատավորները՝ տմարդի, սուտ, խաբող, կաշառակեր, իրավունքը չպահպանող, անհաստատ, հակառակող», թագավորում է անպատժելիությունը, մոլեգնում են անօրինականությունները. «տները գերվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են արքայություն ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները» [10, էջ 455]:

Ճգնաժամի հետևանքով երկրում տիրում են համատարած անպատասխանատվությունն ու բարոյագրկումը: Այսպես, ուսուցիչները՝ «տխմար ու ինքնահավան», «ոսկեսեր, նախանձոտ», կրոնավորները՝

«կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվասեր, քան աստվածասեր», աշակերտները՝ «սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ՝ փութաջան», ժողովրդականները՝ «ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասագործ», զինվորականները՝ «անարի, պարծենկոտ, զենք ստող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ» [10, էջ 451, 453]:

Խորենացին ցավ է արտահայտել աշխարհիկ և հոգևոր առաջնորդների վերացման համար, որովհետև վերջիններիս փոխադարձ համաձայնության վրա էր հիմնված հասարակության զարգացումը. «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանայդ» [10, էջ 447]: Խորենացին պետության անկման պատճառ է համարում թագավորների՝ «անտանելի հրամաններ» արձակելը, կառավարիչների՝ կարգ ու կանոն չպահպանելը:

Գ. Սարգսյանի խոսքով «Խորենացու ողբերգության ակունքը նրա հույսերի, քաղաքական համակրանքի երկփեղկման մեջ է: Դրանք բաժանվում են ժամանակի երկու ղեկավար ուժերի միջև. մի կողմից՝ նախարարության, որի մեջ էր տեսնում պատմահայրը իր ժողովրդի կարողությունների մարմնավորումը և ապագան և, մյուս կողմից, կենտրոնական թագավորության, որը կոչված էր միավորել, ամրապնդել երկիրն արտաքին թշնամու դեմ» [15, էջ 84]: Այս երկու ուժերի հակամարտության, ինչպես նաև Պարսկաստանի և Բյուզանդիայի զավթողական քաղաքականության հետևանքով էլ Հայաստանը կորցրեց իր անկախությունը:

Փավստոս Բուզանդի «Պատմությունը» ընդգրկում է Խոսրով Կոտակ թագավորից (330–338 թթ.) մինչև Հայաստանի առաջին բաժանումը՝ 387 թ., քաղաքական առումով շատ ծանր մի ժամանակաշրջան Հայաստանի համար: Բուզանդի «Պատմությունը» կարևոր աղբյուր է IV դարի հայոց պետության, նախարարական տների և եկեղեցու հարաբերությունների, կենցաղի և բարքերի մասին: Բուզանդն անփոխարինելի աղբյուր է ոչ միայն պատմաբանների, բանասերների համար, այլ նաև պետական կառավարման պատմությունը ուսումնասիրողների: Բուզանդն այն պատմագիրներից է, որ հանգամանալի հիշատակություններ ունի ոչ միայն հայոց տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի, ընտանեկան-հասարակական կենցաղի, հայոց հոգևոր մշակույթի՝ ժողովրդական հավատալիքների, հնագույն պաշտամունքային երեկույթների, այլև պետական կառավարման համակարգի ու բանակի վերաբերյալ [13]:

Բուզանդը նախաբանում նշում է, որ գրել է «անցած անցքերի շարքը, գործերն ու վարքերն աստծո մարդկանց՝ սուրբ քահանայապետների, և

աշխարհիս տեր Արշակունի թագավորների և անվանի մարդկանց՝ զորավարների և քաջ նախարարների մինչև նրանց մահը» [17, էջ 63]:

Ա. Մարտիրոսյանի բնորոշմամբ Բուզանդը «պաշտպանում է մի գաղափար՝ միասնական պետականություն, բայց որտեղ եկեղեցին ունենա վճռական և որոշիչ դեր: Եկեղեցին ներխուժեց երկրի քաղաքական կյանք և դրանով էլ պայմանավորվեցին հետագա շատ իրադարձություններ: Սկսվեց անզիջում պայքար պետության և եկեղեցու միջև, որն ուղեկցվում էր նախարարական իշխանությունների և պետության միջև եղած հակամարտությամբ» [9, էջ 36]:

Բուզանդը հանդես է գալիս որպես եկեղեցու հիմքերի ամրապնդման, եկեղեցու և հոգևորականության իրավունքների պաշտպան: Նա անհանդուրժող է պետական և քաղաքական այն գործիչների նկատմամբ, ովքեր հանուն հայկական ավատատիրական պետության կենտրոնացման ու ամրապնդման փորձում են սահմանափակել հոգևորականության իրավունքները:

Փավստոս Բուզանդը հիշատակում է նաև նախարարությունների ու գործակալությունների՝ կենտրոնական գերատեսչությունների կառավարման մարմինների մասին: Խոսելով Արշակ Երկրորդ թագավորի (35–368 թթ.) գործունեության մասին, Բուզանդը գրում է «առաջին գործակալ–հազարապետ նշանակեց շինականներին շենացնող Գնունյաց ցեղը, որպեսզի իբրև բոլոր երկրի հազարապետներ՝ հոգատարությամբ խնամեն աշխարհը կերակրող գյուղացիությանը»: Սպարապետ է նշանակում Մամիկոնյան ցեղից և «տվեց նրանց զորավարության իշխանություն Մեծ Հայքի բոլոր զորքերի վրա» [17, էջ 121]: Մամիկոնյաններին Բուզանդը կոչում է «վաստակավոր տոհմ»: Նրանց է հանձնված եղել ողջ զորավարական գործը: Մամիկոնյանների տոհմից են նշանակվել սպարապետ, զորավար և զորապետ: Արշակը հենվում է ժողովրդի վրա և նրան պաշտպանում կենտրոնական իշխանության հակառակորդ նախարարների կամայականություններից:

Ըստ Բուզանդի՝ «չհաշվելով մեծամեծ նահապետներին ու տանուտերերին, լոկ միայն գործակալներ՝ ինը հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում, բացի ոտնկա սպասավորության պաշտոնյաներից» [17, էջ 121]: Կարելի է ենթադրել, որ Հայաստանում եղել է 900 գործակալ, որոնք ենթարկվել են թագավորի իշխանությանը:

«Պատմության» սկզբից Բուզանդը Պապին ներկայացնում է որպես բացասական կերպար, որին մայրը՝ Փառանձեմ թագուհին, նվիրել է «դևերին»: Նա բազմաթիվ մեղքեր է գործում և անբարո կյանք վարում: Այդուհանդերձ, այսօրինակ ընկալումը խիստ միակողմանի է: Պապ թա-

գավորը, ելնելով հայրենիքի շահերից, երկրի ներսում վարում էր պետության կենտրոնացման քաղաքականություն [8, էջ 14]: Պապի օրոք «նվազում էին եկեղեցու պաշտամունքի և սպասավորության կարգերը» [17, էջ 270]: Պետության հիմքերն ամրապնդելու համար նա բռնագրավեց եկեղեցական հողերի յոթ բաժնից հինգը, վերացնել տվեց եկեղեցուն տրվող տասանորդ հարկը, կրճատեց հոգևորականության թիվը, փակել տվեց բազմաթիվ վանքեր, կուսանոցներ և մենաստաններ, որտեղ կուտակվել էին մեծ թվով մարդիկ: Նշված հաստատություններից արտաքսվածներին «իր հպատակության էր ենթարկում»: Այս քայլով Պապ թագավորը ոչ միայն ամրացրեց իր և աշխարհիկ ավատատերերի իրավունքները, այլև մի քանի անգամ ավելացրեց պետական եկամուտները, ստվարացրեց և հզորացրեց հայոց բանակը՝ զինվորների թիվը 10 հազարից հասցնելով 90 հազարի: Պապ թագավորի այս ձեռնարկումները իր ժամանակի համար ունեին առաջադիմական նշանակություն և ելնում էին պետության ու ժողովրդի շահերից:

Անդրադառնալով իշխանավոր - ենթակա հարաբերություններին՝ Բուզանդը նշում է, որ ժողովուրդը պետք է հավատարմությամբ ծառայի իշխանավորներին, իսկ վերջիններս էլ լավ վերաբերվեն իրենց հպատակներին: Նա կոչ է անում պահպանել հավասարակշռություն իշխողների և ենթակաների միջև, յուրաքանչյուրին հիշեցնելով իրենց պարտականությունները:

Թագավորը իշխանության բարձրագույն մարմինն է: Ծառայությունների համար թագավորը իրեն հավատարիմ մարդկանց «մեծ պարգևներ ու պատիվներ և շատ գյուղեր է պարգևում» [17, էջ 242]: Բուզանդը նկարագրում է նախարարների հավատարմության բազմաթիվ օրինակներ: Տիրասիրության և հավատարմության մասին է Մուշեղ Մամիկոնյանի խոսքը Պապ թագավորին. «Ես կապրեմ ու կմեռնեմ քեզ համար, ինչպես իմ նախնիները քո նախնիների համար, ինչպես իմ հայրը քո հոր՝ Արշակի համար. ես էլ նույնպես կմեռնեմ քեզ համար, միայն թե չարախոս մարդկանց չլսես» [17, էջ 237]: Նախարարը հորդորում է Պապ թագավորին ենթակաների հանդեպ լինել արդարացի և չառաջնորդվել ուրիշների խոսքերով:

Տիրասիրության օրինակ է Դրաստամատ մարդպետի արարքը, որը պարսից Շապուհ արքայից իր կատարած ծառայության դիմաց հրաժարվում է «երկրներից, գավառներից, գանձերից» և ցանկանում է տեսնել Անհուշ բերդում շղթայված Արշակ թագավորին: Հայկական բանակի «միասիրտ հավատարմությունն ու տիրասիրությունը» զարմացնում է նույնիսկ թշնամուն: Հայկական զորքը պարսից Շապուհ արքան բնորոշում է «տիրասեր, միաբան և հավատարիմ»:

Խոսքով Կոտակի և Վրթանես կաթողիկոսի դարաշրջանում, երբ, ըստ պատմիչի վկայության, «աճեցին ու բազմացան խաղաղություն և շենություն, մարդաշատություն և առողջություն, պտղաբերություն, առատություն և գործի հաջողություն, ծաղկած էին իրավունքն ու արդարությունը» [17, էջ 25]: Բյուզանդն այս ժամանակաշրջանը համարում է պետության բարգավաճման դարաշրջան:

Ներսես կաթողիկոսի օրոք կրոնավորների թիվն ավելանում է: Նա «բարեկարգեց եկեղեցական պաշտամունքի, եպիսկոպոսների, քահանաների և սարկավագների կարգը, եկեղեցիների և վկայանոցների շենքերն ամբողջապես նորոգեց և բարեկարգեց» [17, էջ 232]: Բացի հոգևոր հայրապետ լինելուց, Ներսես կաթողիկոսը մասնակցել է նաև երկրի արտաքին քաղաքականությանը: Դա է վկայում, որ Արշակ թագավորը Ներսես կաթողիկոսին և «Հայոց մեծամեծերից տասը սատրապ» ուղարկում է հունաց կայսեր Վաղեսի մոտ հայ-հունական խաղաղության դաշինքն ամրապնդելու համար: Հոգևորականները ևս ունեին սեփականություն: Միայն Ներսես կաթողիկոսը ուներ 15 գավառ, որպես «սեփական իշխանություն»:

Ղազար Փարպեցին եղել է Վաղարշապատի վանքի առաջնորդ: Վահան Մամիկոնյանի հանձնարարությամբ սկսում է գրել «Հայոց պատմությունը»: Պահպանվել է է նաև «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկը: Փարպեցին անդրադարձել է Հայաստանի քաղաքական և եկեղեցական պատմությանը: Նա շարունակում է Բուզանդի պատմությունը՝ 387 թ.-ից, երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» հայ կառավարչական մտքի կարևոր էջերից մեկն է, որտեղ արժեքավոր մտքեր են արտահայտված իշխանության, «ղեկավար-ենթակա փոխհարաբերությունների» կարգավորման մասին [11, էջ 93]: Ղազար Փարպեցին իր «Պատմություն Հայոց» երկի շարադրանքն ավարտել է V դարի վերջերին: Աշխատության նախաբանում հեղինակը հիշում է իրեն նախորդած պատմագիրներ Ագաթանգեղոսին և Փավստոս Բուզանդին: Նա Ագաթանգեղոսի աշխատությունը կոչում է «առաջին պատմություն», Փավստոսինը՝ «երկրորդ պատմություն», իսկ իր գիրքը՝ «երրորդ պատմություն» [14]:

Թագավորական իշխանությունը Հին Հայաստանում բացարձակ միապետություն էր. «Թագավորը միահեծան տիրապետություն ուներ ամբողջ Հայաստան աշխարհի վրա» [3, էջ 19]: Թագավորը պիտի արդարացի և ճիշտ գնահատի հպատակների ընդունակությունները: Փարպեցին դեռևս V դարում անդրադարձել է ղեկավարման միասնականության, անհատական շահերը ընդհանուր շահերին ստորադասելու սկզբունքների

քննարկմանը: Հազվերտի հղած դավանափոխության հրովարտակը մերժելու համար հավաքվեցին «Հայոց աշխարհի եպիսկոպոսները ըստ գավառների և պատվական երեցներ ու վանականներ» կամ «բոլոր նախարարներն ու սեպուհները, որ հավաքվել էին արքունիքում, միաբանված եկան Մամիկոնեից տեր և Հայոց զորավար Վարդանի մոտ ու նրան հայտնելով միաձայն արած խորհուրդը, պատմեցին իրենց ամենայն դիտավորությունները, կատարվելիքի մասին մտածումները» [3, էջ 103, 117]:

Հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանը պարսից արքային դիմում է ենթակայի դիրքերից և պահանջում, նախ՝ հարգել ենթակային այնպիսին, ինչպիսին նա կա: Երկրորդ՝ ճիշտ գնահատեն մարդկանց՝ «Ճանաչեք տոհմիկին ու անտոհմիկին, քաջ ու օգտակար մարդկանց պահեք լավերի ու պատվականների մեջ, արհամարհելով ոչինչի տեղ դնեք վատին և անպիտանին, սիրեք վաստակավորներին ու անվաստակներին, իմաստուններին մոտ պահեք և նրանցից խորհուրդ առնեք» [3, էջ 391]: Երրորդ՝ ղեկավարի և ենթակայի շփումը կլինի արդյունավետ, եթե շփվեն ուղղակիորեն, այլ ոչ թե միջնորդավորված, եթե ստացված տեղեկատվությունը լինի հավաստի: Իշխողի դիրքերից էլ տրված է պարսից թագավոր Վաղարշի պատասխանը Վահան Մամիկոնյանին. «լինել տիրասեր, արդարամիտ և աշխարհաշեն»:

Ղեկավար-ենթակա հարաբերության մասին է հետևյալ դրույթը. «Այն տերը, որ չկարողանա իր ծառաների մեջ լավը վատից ջուկել և չկամենա յուրաքանչյուրի պետքերը հոգալ ըստ արժանվույն, այդպիսին դժվար թե կարողանա լավ ծառայի տեր լինել» [3, էջ 331], այսինքն՝ լավ ղեկավարից է կախված ենթակայի աշխատանքի արդյունավետությունը: Փարպեցին գովաբանում է աշխատանքը, աշխատասիրությունը, որը կհատուցվի արդարորեն. «Դուք եկեք մեզանից՝ որպես ձեր հպատակներից, պահանջեցեք հարգել տերերին, պահանջեցեք գործ, վաստակ, հպատակություն, օգուտ, արդարամտություն, ապա աստվածաբար, անզրկող մտքով, յուրաքանչյուր մարդու հատուցեցեք ըստ իր վաստակի: Մեր բոլորիս խոսքն ու պահանջն այդ է... Ճանաչեցեք մարդկանց՝ լավին ու վատին և յուրաքանչյուրից պահանջեցեք գործ, ոչ թե կատակաբանություն: Գործին նայեցեք՝ ըստ վաստակի հատուցելու համար և ոչ թե ըստ լեզվի խաբեության» [3, էջ 337]:

Պատմիչը զգուշացնում է նաև վատ ղեկավարման հետևանքների մասին. «երբ այդ թագավորը կամենում է ուրիշի անջնջելով տեսնել և ուրիշի ականջներով լսել, այն ժամանակ ծանր է դառնում այդպիսի ծառայությունը, դառն ու վտանգավոր, և ոչ ոք այն չի տանի» [3, էջ 331]: Փարպեցին ներկայացնում է նաև իմաստուն ղեկավարի կերպարը, խոսելով Վահան

Մամիկոնյանի մասին. «Ամենքը զարմացած էին Մամիկոնյանի իմաստության ու նրա բերանից ելած խոսքերի շնորհառատության վրա» [3, էջ 423]:

Ամփոփելով նշենք, որ հայ պատմիչների աշխատություններում, առանձնապես շեշտվում են ինքնիշխանության, ազատության, իրավունքի, օրենքի գերակայության սկզբունքները, որոնք արդիական են նաև այսօր: Հանրային կառավարման հիմնախնդիրները հայ մտածողների աշխատություններում տարբեր կերպ են մեկնաբանվել՝ ելնելով իրենց ապրած ժամանակաշրջանի առանձնահատկություններից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Աղոնց Ն.**, Հայաստանը Հուստիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Եր., «Հայաստան», 1987:

2. **Խալաթեանց Բ.**, Մի կարծիք հայ նախարարութեանց ծագման մասին, Պարիս, 1902:

3. **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն: Թուրք Վահան Մամիկոնյանի: Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Բ. Ուլուբաբյանի, Եր., Երևանի համալս. հրատ., 1982:

4. **Ղազարյան Ա.**, Մովսես Խորենացու «Պատմություն հայոց» աշխատության մեթոդաբանական առանձնահատկությունները,

http://www.y-su.am/files/15A_Ghazaryan.pdf:

5. Հայերեն բացատրական բառարան, **Սյր. Մալխասյանցի խմբ.**, Հ 3., Եր., «Հայպետհրատ», 1944, http://www.nayiri.com/imagedDictionary/Browser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&pageNumber=838

6. **Կոստանյան Ա.**, «Նախարար» տերմինի մասին // Պատմաբանասիրական հանդես, 1973, № 3, էջ 151:

7. **Մանանդյան Հ.**, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան), Եր., Հրատ. Մելքոնյան ֆոնդ, 1981:

8. **Մանուկյան Ա.**, Հայ կառավարչական միտքը և հանրային կառավարումը V-XIV դարերում, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016,

9. **Մարտիրոսյան Ա.**, Փավստոս Բուզանդ // Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ., Եր., Երևանի համալս. հրատ., 1976

10. **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Աշխարհաբարից թարգմ. և մեկնաբան. Ստ. Մալխասյանը, Եր., Երևանի համալս. հրատ., 1981:

11. **Մելիք-Բախշյան Սյ.**, Ղազար Փարպեցի // Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ., Եր., Երևանի համալս. հրատ., 1976:

12. **Նազարյան Շ.**, Մովսես Խորենացու «Ողբը» հայոց անկախ պետականության գաղափարի գրական հիմն է, և Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգության» երկը աղերսներ ունի նրա հետ, <http://echmiadzin.asj-oa.am/6321/1/78.pdf>:

13. **Նահապետյան Ռ.**, Փավստոս Բյուզանդը Հայաստանի պետական կառավարման համակարգի և բանակի մասին, <http://lraber.asj-oa.am/6151/1/64.pdf>

14. **Ներսիսյան Վ.**, Ղազար Փարպեցին և իր երկերը, <http://echmiadzin.asj-oa.am/6107/1/54-61.pdf>

15. **Սարգսյան Գ.**, Մովսես Խորենացի // Հայ մշակույթի նշանավոր գործիչները 5-18-րդ դդ., Եր., Երևանի համալս. հրատ., 1976:

16. **Սուվարյան Յու., Միրզոյան Վ.**, Հանրային կառավարման տեսություն և պատմություն, Եր., Տնտեսագետ, 2014:

17. **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Թարգմ., ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, Եր., Հայաստան, 1968:

18. **Глазунова Н.**, Государственное (административное) управление. М.: РНИТИ-ДАНА. 2004:

ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ В РАБОТАХ АРМЯНСКИХ МЫСЛИТЕЛЕЙ V ВЕКА

АМАЛИЯ МАНУКЯН¹, АРУТЮН ГРИГОРЯН²

¹ Армянский государственный экономический университет

² «Французский университет в Армении» фонд

Изучение армянской управленческой мысли более чем актуально, потому что только через сравнение прошлого и настоящего можно понять систему публичного управления, а также значение и сущность ее институтов.

Ключевые слова: управленческая мысль, публичное управление, принципы управления, государство, отношения руководитель–подчиненные.

PROBLEMS OF PUBLIC GOVERNANCE IN THE WORKS OF ARMENIAN THINKERS IN THE 5TH CENTURY

AMALYA MANUKYAN¹, HARUTYUN GRIGORYAN²

²Armenian State University of Economics

¹Fondation Universite Francaise en Armenie

The study of the Armenian governing thought is more than relevant, because only through the comparison of the past and the present is it possible to understand the public administration system and the significance and essence of its institutions in a more comprehensive way.

Keywords: managerial thinking, public administration, governance principles, state, manager-subordinate relations.

Ներկայացվել է խմբագրություն 16.03.2021
Երաշխավորվել է տպագրության 12.05.2021